

և երբոր միայն պակասաւորին վրայ կը
խօսէր առանց մէկալ ոտքին կատարե-
լու թեանը նայելու, փիլիսոփայն անոր
ինչ տեսակ մարդ ըլլալը լաւ կը ճանչ-
նար և պատշաճ զգուշութեամբ կը վա-
րուէր անոր հետ :

Բարեբաղդաբար ամէն մարդիկ այս
փիլիսոփային ունեցած գործին չեն կըր-
ցած ստանալ . բայց ամէնքն ալ, թէ որ
խելք բանեցրնեն՝ այս ախտին նշաններն
յայտնի կընան տեսնել, ու պէտք եղա-
ծին պէս զգուշանալ :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ն

Լ Է Կ Ո Ւ Ֆ Ն :

ԼՄՊԱՐԸՇՏԻՆ տարածիզ
Յոսկեձեղուն ՚ի յարկաց
Տրակէր կուսան գեղեցիկ
Լս սեղանով լուսազգեսաց
Լնմահական խորանին,
Ուր ողջակէզք սրբանուէր
Օղջ ընդ խրնկոց անուշին
Օրխեն ըզտիւ և զգիշեր .
Իբրև ծաղիկ անսպակ՝
Ի մէջ փրշոց և ճրճեաց
Որ ըզբուրումն անուշակ
Եւ զգոյն պահեաց երեսաց,
Լջով ճարտար մըշակին
Տընկեալ յերկիր արգաւանդ՝
Ի յորձանաց մըրըրկին
Ի զգուշացեալ անվրկանդ :
Լչքն անմեղիկ գերարփին
Լըցեալ աղօտ արտասուօք,
Եւ զվայելուչ գեղ դիմին
Ունէր տըխուր ինչ մորմոք :
Օհերսըն սըփուեալ հանգունակ
Լլուորեալ ուռնեւոյն
Սեղմիկ ողբայր միայնակ
Լս ստորոտով սեղանոյն :
Լալ քան զդիմացն անբիծ բոց
Փայլէր հոգւոյն պատմուճան
Ում մանկութեան ՚ի տիոց
Եւ կայր անքուն ոստիկան :

Մինչդեռ անզոյգ աղաւնին
Մընչեալ առ հայրն երկնաւոր՝
Սուտըս խընդէր պերճ գրախտին
Ի՚ի գիրկ նորին տարփաւոր,
Լհա հերձաւ քող երկնից
Բացաւ ուղի անընդել
Եւ ընդ շաւիղ լուսալից
Լջ հրաշալին Գաբրիէլ :
“Օ՛ի դու ասաց, ու՛ր Կարիամ,
Սըգաս հեծես տըխրադէմ՝
Մինչդեռ երկնից աչք համայն
Օքեզ հիացմամբ նըշմարեն .
Սըրբեա սըրբեա զարտասուս
Լըռեա յողբոց վըշտագին
Օոր վայրապար դու հեղուս
Յերկիր անգութ և լուին .
Բանդի կուսիդ գեղանի
Սահկանացուք և հրեշտակք
Տիւտեալ անմահ ձիթենի
Բոլորեսցեն սուրբ պըսակ :
Գու հարսն իցես անմահին
Եւ սըխրալիդ յայդ ՚ի ծոց
Որդի հանուրց արքային
Գըտցէ զհանգիստ աթուոց ,,
Սըխրացաւ կոյսըն մաքուր,
Եւ ամօթխած ՚ի գետին
Լարկ ըզքաղցը աչկունս իւր
Ի լուր բանից պատգամին :
“Մի զիս պատրեր անօգուտ,
Օի մաքրութեան հրաշագան
Յորում կացի անխախտա՝
Երբէք չեղէց դաւաճան :
Սլացիր անդէն քոյդ յաշխարհ
Յորմէ զխոստմունքը բերես,
Օի չըգիտեմ բընաւ զայր
Օոր դու ՚ի զուր գուշակես ,,
“Մի երկընչիւր դու կուսան,
Արկնեաց բերան հրեշտակին,
Օի տաղաւար մաքրութեան
Ոչ արատի քօ բնաւին :
Լիցիս դու մայր՝ այլ անաղտ
Լնբըծութեամբդ երկնային,
Օի զօրութեան իսկ զանյաղթ
Գըլուխդ առցէ զհովանին ,,
“Լըդ ըստ կամաց Բարձրելոյն
Եղիցի այդ, ո՛հ հրեշտակ,
Օի հրամանաց ես նորուն
Կամ աղախին հըպատակ ,,
”

1 ըլաւ , և լուռ և սրաթռիչ
 2 Սաւառնացաւ յօդ վերին՝
 3 Բանից կուսին զեկուցիչ
 4 Բռ թագաւորն երկնային :
 5 Եւ մինչ շըրթունքն այն հեղիկ
 6 Բարբառեցան զլսիցին՝
 7 Եւ Բարձրելոյն անդրանիկ
 8 Ի յառազաստ կոյս ծոցին :

Գ. ԽՈՐԷՆ ՄՈՇՈՐՈՅ
 ՅԱՇԱԿԵՐՏԱՅ ՌԱՓ . ՎԱՐԺԱՐ .

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ ԻԱ

Վարժածութիւն եկամտից կամ սպառումն
 հարստութեանց :

ՈՒՍՄԱՆՍ առջի հատուածէն սկը-
 սեալ մինչև հիմա հարստութե հաստ-
 մանը ու անոնց բաժանմանը վրայ էր
 խօսածնիս , և ահա այս յօդուածիս
 մէջն է որ անոնց գործածութեանը վը-
 րայ պիտի խօսինք , որ բաղաբական
 տնտեսութեան բառով սպառումն հա-
 րստութեանց՝ կը կոչուի : — Երդ սպա-
 ռումը կրնանք սահմանել լրումն աշխա-
 տանաց , վասն զի կը հաստենք սպառե-
 լու համար . որով և հաստած բերքեր-
 նուս աժէքը կ'եղծանենք՝ շուտով կամ
 կամաց կամաց . առջինին օրինակ ու-
 տելիք մը , երկրորդին՝ ազանելիք մը : —
 Սիայն աս գիտնալու է՝ որ սպառումը
 երկու տեսակ է , մէյմը անբեր՝ , մէյ-
 մ՝ ալ բարբեր՝ : — Ենքեր է սպառումը
 երբոր բերոց աժէքը բոլորովին կը հատ-
 ցնենք զանոնք գործածելովնիս . իսկ
 բարբեր՝ երբոր սպառելով նիւթին ա-
 ժէքը չփճանար , հապա ուրիշ ձև կամ
 յատկութիւն մը ստանալով՝ առջի ար-
 ժէիցը հաւասար կամ անկից աւելի ա-

1 Consommation des richesses.
 2 Improductive.
 3 Reproductive.

ժէք կ'ունենայ : Տաճկաստանէն տա-
 ըին այսչափ մետաքս կ'անցնի Եւրո-
 պա , որով Տաճկաստանին բերքերէն
 նոյնչափ մետաքս սպառուած կ'ըլլայ ,
 բայց բարբեր կերպով . վասն զի նոյն
 մետաքսը գնողները կը բանեցնեն զայն ,
 ու անոր աժէքը կ'աւելցնեն . իսկ ա-
 նոնք որ բանած մետաքսէ ապրանքնե-
 րը կը գնեն , ու իրենց պիտոյիցը կը
 գործածեն , ահա անբեր կերպով սպա-
 ռած կ'ըլլան . վասն զի անկից ետև ալ
 մետաքսին աժէքը չաւելնալէն զատ
 փճանալու վրայ է . սակայն որովհետև
 յազուրդ կամ բերկրանք կը զգան մար-
 դիկ ապրանքները սպառելով , ուստի
 անբեր կոչուած սպառումն ալ ընկերու-
 թեան օգտակար ու ամենահարկաւոր
 է , միայն թէ զեղծումն չմտնէ սպառ-
 ման մէջ :

Սպառման վրայ եղած կարծիքները
 երկու կը բաժնուին . ոմանք կ'ըսեն թէ
 սպառումը որչափ աւելի շատ ըլլայ՝
 այնչափ աւելի աղէկ է . որովհետև
 հաստումն ալ անոր համեմատ կ'ըլլայ .
 և հաստման ու սպառման շատնալովը
 մարդկային ընկերութեան դիւրութիւն
 ու երջանկութիւնը կ'աւելնայ : Ուրիշ-
 ներն ալ կ'ըսեն՝ թէ բերքերուն աւելի
 առատ հաստման պատճառը եկամտից
 շատութեանն ու զանոնք խելքով գործ-
 ածելէն է . և մարդկային ընկերու-
 թեան երջանկութիւնն ալ աւելի միջա-
 կայնոց ու մանաւանդ աղքատաց սպա-
 ռելի բերքերուն շատութեանն կը կա-
 խուի , որով առջի կարծիքը ոչ միայն
 օգտակարութեանն կ'ելլէ , հապա ին-
 չուան փնասակար ալ կ'ըլլայ . վասն զի
 անոնք որ առջի կարծիքին համոզուած
 են , (որ թուով քիչուոր , ու եկամտից
 բաժանման ու գործածութեան օրի-
 նացը վրայ քիչ տեղեկութիւն ունին) ,
 օգտակար կը համարին հարուստներուն
 իրենց ծախքը շատցնելը : Յիրաւի հա-
 րուստներուն չափազանց ծախքերովը
 այս կամ այն ճարտարութեան մէկ եր-
 կու ճիւղերը կը սնանին կը յաջողին ,
 բայց նոյն անխնայ եղած ծախքերը կըր-
 նային դրամագլուխ ըլլալ ուրիշ խիստ